

**ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ
ԱՐՅԻԱՊԱՏԻԻ Տ. ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍ. ՊԱԹԱԳԵԱՆ Կ'ԱՅՑՅԵԼԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Չորեքշաբթի, Յուլիս 21ին, Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Հայոց Առաջնորդը՝ Արհիապատիւ Տ. Մանուէլ Եպս. Պաթագեան, ընկերակցութեամբ Գերպ. Տ. Գրիգոր Վրդ. Շահինեանի եւ Գերպ. Տ. Արմենակ Վրդ. Պետրոսեանի, այցելեց Առաջնորդարան եւ սիրով ընդունուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ, որ ի սրտէ բարի գալուստ մաղթեց բարձրաստիճան հիւր հոգեւորականին եւ իրեն ընկերացող եկեղեցականներուն եւ հիւրերուն: Սոյն հանդիպման ներկայ էին նաեւ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան եւ Պրպրէնքի Ծուխի՝ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեան:

Սրբազան Հայրը լսեց Պաթագեան Սրբազանին տեղեկութիւնները իրենց հոգեւոր առաքելութեան մասին եւ իր կարգին հաղորդեց, որ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Օծումը պիտի կատարէր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Առ ի գիտութիւն, Սրբազան Հայրը պաշտօնապէս հրաւիրեց Պաթագեան Սրբազանը Մայր եկեղեցւոյ Օծման: Մտերմիկ գրոյցէ ետք, հիւրերը գոհունակ սրտով բաժնուեցան Առաջնորդարանէն: